




ԲՐՐՈՅՆԿԱՆ, ՌԻՍՈՒՄՆԵԿԱՆ, ԸՐՈՒԵՍՏԳԻՏՆԿԱՆ

Ի Գ. ՅԱՐԻ 1909

Տարեկան 15 ֆր. ոսկի — 6 ռբ.:
Վեցամսեայ՝ 8 ֆր. ոսկի — 3 ռբ.:
Երկ թիւ կ'արժէ 1-50 ֆր. — 70 կ.:

ԹԻԻ 2 ՓԵՏՐՈՒՄ

Գ Ր Ա Կ Ա Ն

“ԱՂԲԻՐ”, ԸՄՍԱԳՐԻ 25ԱՄԵԱԿԸ



Ա.

Նոյեմբեր (1908 թ.), դեկ.

23-ին թուրքեց
“Աղբիր”, մանկա-
կան ամսագիրը
իր գոյութեան
յուսն եւ կիւրա-
ւանքը:

Հայ հասարա-
կութիւնը ըստյական մեծ պարտք ունի
կատարելու իր խղճի եւ գիտակցութեան
առաջ մեր այդ անդրանիկ մանկական
ամսագրի գոյութեան նշանակալից տարի-
դարձի առիթով:

“Աղբիր”, ամսագրի անունը սիրտ
կապերով կապուած է մեր մանկական
դրականութեան սկզբնաւորութեան
ետ. նրա հետ զուգընթաց ծաղկել ու աճել
է՝ այս մանկական գրականութիւնը, այն

ՃԿ

գրականութիւնը, որը իր համար նպա-
տակ ունի ծրագրած մատակարարել մա-
նուկ սերնդին ծարախ եւ յարցասէր
մտքին առողջ կերակուր. որը պէտք է
տալորեցնէ տղայ տարիքից, մանկական
կեանքի ողբաբանից՝ սիրել ընտելիւնը ու
նրա գեղեցկութիւնները, դիտել ու գնահատել
ընտելիւն եւ շրջապատի երեւոյթները,
խաղել նրանց միջի գաղտնիքները ու
նրանց փոխադարձ կապը, խաղաղորդել ու
մանչսալ նրանց իրական (réel) նշանա-
կութիւնը:

Ընթանալով փոքրութիւնից այդ
ուղղութեամբ, մանուկը ընդ սմին դի-
տում է եւ գգում է եւ կեանքի ան-
հանգստացնող կողմերը. նա իստարա-
պէս գգում է այն թուրքը, ինչով շնչուած
է իր շրջապատը, իր միջավայրը. — ու-
րախութիւն եւ վեշտ, յոյս եւ հիասթափու-
թիւն — տեղ են բռնում նրա սրտում:

Որչափ յետգնետէ զարգանում է
մանկան մէջ հարցասէր ոգին, այնքան
շրջապատը նրա իմար դիտողութեան,
ընտելիւն եւ յետաքրքրութեան ամի-
նորայ ստարկան է դառնում. ամեն մի
նոր գիտ, ամեն մի ինքնուրոյն յայտնա-

գործառնութիւն — անասելի ուրախութիւն
 և պատճառում՝ նրան, ճառագայթում՝ և
 նրա զէմքը ներքին ցնծումով, նարատա-
 ցում՝ է նրա գիտցածի պաշարը եւ աւելի
 եւս քոցավառում՝ նրա մէջ դիտելու,
 գննելու, իմանալու խանդը, որով քնա-
 կանապէս բնորոշակում՝ եւս աւելի եւ
 աւելի նրա մտքի շորքոնները:

Եւ միջէ զպրոցական ուսումը եւս,
 որպէս վերջնական նպատակ, որպէս
 պոսակ իր գործունէութեանն այլ կողմի
 չունի ի նկատի. միջէ զպրոցական ու-
 ման նպատակը միայն ուսումնասարտ
 աշակերտներ ու աշակերտութիւններ տա-
 լու մէջն է:

Դպրոցը՝ աւանդելով մանուկներին
 մի որոշ չափով ուսում՝ եւ գիտութիւն,
 նա դորանով աչքի առաջ ունի իր մեր-
 ձաւոր նպատակը. բայց այդ չէ՝ նշանա-
 կում՝ թէ նա մուսացութեան պէտք է տայ
 իր հետաւոր բայց վերջնական ու երկնա-
 կան նպատակը, իր սաների անձնաւորու-
 թեան քաղմակողմանի զարգացումը,
 նրանց մէջ ներշնչելու իրականագործաւոր-
 թեան, ինքնակիրթութեան եւ ինքնա-
 զարգացման ձգտումը՝ դպրոցը թողնե-
 րաց զկրի:

Եւ ճնշը դորանով էլ զանազանում՝
 է ճին առարկայական ուսուցումը — նոր
 եւնթակայական ուսուցումը:

Դժուար է այս յօդուածում՝ մի առ մի
 թուել ու բացատրել մանկական շոքը
 ամենագրի ու այդ կարգի նրատարակու-
 թեանց միտախորհուրդ նշանակութիւնը,
 նրանց կատարող դերը մանկան մտաւոր
 եւ նոգելուր կեանքում. բաւական է ծան-
 րանալ այն կէտի վերայ, որ մանկական
 շոքը ամենագիրը մատաղ սերնդի նամար
 րով զուարճութեան ժամանցի դեր չէ կա-
 տարում, այլ որպէս ընթերցանութեան
 աղբիւր, որպէս լրացնող եւ ընդարձակող
 գործոն նրա ընտանեկան եւ դպրոցական
 ուսման, ազդուապէս սատարում՝ է ամեն

մի դպրոցական ուսման իմաստն ու
 վերջնական նպատակին — ինքնու-
 գործառնութիւն, ինքնակիրթութիւն,
 ստեղծագործելու եւ յայտնագործելու ըն-
 դունակութեան:

Լուրջ եւ խելացի մանկական ամ-
 սագիրը ու նման իրատարակութիւնները
 որոնք ղեկավարում են նման եւ բանա-
 գէտ անձինքների ճեղքով, որոնք գիտեն
 շնորքով եւ խելացիութեամբ նիւթերի
 քնտրութիւն իմաստը մանկան տակա-
 ցողութեան եւ նրա նոգեբանութեան վի-
 րայ, գերագանց դեր կարող է կատարել
 մանուկ սերնդի կրթութեան եւ դաս-
 տիարակութեան գործում՝ եւ նրա նշա-
 նակութիւնը մատաղ սերնդի նամար կա-
 րելի է, մի կարծիքով, յամենառեւ մա-
 սամբ ստորստամոքեայ այն ճիւղի նետ,
 որի անունն է պէպսին (Pepsine) եւ որը
 այնպէս մեծ դեր է խաղում մարտոր-
 թեան պրոցեսում՝ փոխարկելով ստա-
 միքսի կերակուրը՝ միս եւ աղբիւր:

Պէտք է հաստատ, որ “Աղբիւր, ամ-
 սագրի ճիմատկիրը Տիգրան Ծագարեան,
 ոգեւորուած է եղել վերայիշեալ նկա-
 տումներով ու նպատակով, երբ 25 տարի
 առաջ ճիմել ու նրատարակել է “Աղ-
 բիւրը”:

Նա՛ իր ոգեւորութեան ու յափշտա-
 կութեան մէջ նրատարակելով ու ղեկա-
 վարելով այդ ամենագիրը եւ նրան յարա-
 կից ռազմանթի նրատարակութիւններ,
 գործ է դրել իր նոգու քուրք եռանդը,
 զորեւ և նրանց յաջողութեան համար իր
 կեանքի լաւագոյն տարիները, իր առաջ-
 ջրութիւնը եւ նիւթական նայրական ու
 ստացական անփոխարինելի մեծ կարու-
 դութիւնը, մի զոհողութիւն, որը հազուա-
 գիտն է, եթէ ոչ եղակին մի ռուսասոյ
 նրատարակողների մէջ:

Եւ քուրքը կատարել է նա,
 յափշտակաւորած յատուկ խանդով, տա-
 րուելով իր սիրած գործից եւ ներկայումս

յետ անճառական, քաղաքական և նիւթական մեծամեծ գործարարութեան, 25 տարի թիւալարելով իր նստը առանց նաւաբեկութեան, այլ աւելի յաղթական ելքով, կանգնած է նա նայ հասարակութեան ու համըրէն ազգի առաջ, կարելի է ասել, մաքուր խղճով կատարած համարելով իր պարտքը՝ յանուն հասարակաց քարիքի, յանուն մատաղ սերնդի:

Բ.

Բայց դառնանք փոստերին՝ գէթ չակիր՞ ամիսփումով:


«Աղբիւր», ի իմ: Նաղիւր-խմբագիր Պ. Տ. Նազարեանը քնիկ Շուշեցի է. նա ծնուել է 1858 թ. Սեւ. 29-ին: Երա մայրը, Զարուհի, անուանի Հախումեան տան սերունդ է եւ առանձին խնամք ու շոգացողութիւն է գործ դրել իր անդամիկ որդւոյ դաստիարակութեան գործում:

Նազարեանի տան դաստիարակները մանուկ հասակից եղել են՝ Պետրոս Շանշեան, Պերճ Պապեան, Գարեգին Մուրադեան (Մելքիսիդէի արքեպիսկոպոս), Նկարիչ Ստեփան Ներսիսեան եւ իր քոռեկներ — Մարիամ Հախումեան:

Նա 1879 թ. Շուշում հիմնել է Հրատարակչական Գրատեմեակ եւ այն տեղից թղթակցել է «Մշակին», եւ «Մեղրին»,

— Շուշեցի եւ Արցախեցի ստորագրութեամբ, աշխատակից անդամ էր «Թիֆ. Հայրոց Հրատարակչական Ընկերութեան», տարածելով Շուշում նրա իրատարակութիւնները մեծ քանակութեամբ. այնուհետեւ նա 1881 թ. մշտապէս տեղափոխուեւ է Թիֆլիս եւ 1883 թ. իմք է դնում «Աղբիւր», ին, իսկ 1890 թ. նա

հիմնում է «Տարագ. պատկերագրող շարափութերթը, որը «Աղբիւր»-ի նետ տարածում էր շքեղ պրեմիւններով: 1895 թ. «Տարագրական գործերի համառոտական ցուցանմուղիում», «Տարագ», ը շքեղ իրատարակելուն համար նա պարգևատրուեւ է գլխաւանակաւ փկայականով. ինքը Պ. Նազարեանը, համարեայ իրորսնիւշուր տարի, գնաւով եւրոպա, շփում էր այն-



Պ. ՆԱԶԱՐԵԱՆ

տեղի լրագրողների եւ արուեստագէտների նետ եւ ուսումնասիրում էր գլխաւորապէս տպագրական-իրատարակչական գործը. նա 1904 թ., երբ կատարում էր «Վիեննայի Միջազգային Մամուլի Դաշնակցութեան», տասնամակը, Պ. Նազարեանը յրաւիրում է մասնակցելու յիշեալ Դաշնակցութեան որպէս միակ նայ ներկայացուցիչ, շարունակելով այնուհետեւ մասնակցել նորա ձերթական գումարումներուն: 1905 եւ

1907 թ. Պորտուգալի Լիսաբոն քաղաքում՝ 1908 թ. քացուից «Գրականութեան, Արուեստի եւ խաղողութեան», ցուցահանդէս, որտեղ Պ. Նազարեանը աշխատեց հաստատել հայկական գրականութեան րամանմունք եւ եւ ընտրուեց պատուաւոր անդամ՝ այդ Միջազգային Ընկերութեան։ 1906 թ. նա քացեց «Աղբիւր-Տարազի», խմբագրութեան կից Մամուլի բժշկայի եւ Գրական եւ Գեղարվեստական Մարմնի։

Հրատարակական գործում Պ. Նազարեանը անօրինակ եռանդ եւ սէր է ցոյց տուել. քացի 25 տարի «Աղբիւր», եւ 18 տարի «Տարազ», պարբ. հրատարակութիւններից, նա մանուկների եւ ժողովրդի ընթերցանութեան համար հրատարակել է 50-ից աւելի ինքնուրոյն եւ թարգմանական գրքեր մեր մանկական լատագոյն գրողների. քացի այդ նրա հրատարակութեամբ լոյս եւ տեսել 6 թատրոնական պիես, օրացոյցներ, ալբոմներ, պատկերներ յախճապակու վերայ պատմական, կրօնական եւ այլ եւ այլ թովանդակութեամբ։

«Աղբիւր, ի իմուտելու օրից իր խորհուրդներով եւ աշխատակցութեամբ մեծապէս նպաստել է ուսւ յայտնի գրող Ն. Ա. Սօրովեալ-Նեաւեղալը, որը տեղափոխուել էր Թիֆլիս Կովկասի հետ ծանօթանալու. նա համարում է «Աղբիւր, ի հիմնական ոյժը, նրա դպեալը։ «Աղբիւր, ի մէջ ինքը, Պ. Նազարեանը իր պատմութեանն ու մանկական այլ եւ այլ գրութեանն տակ ստորագրում էր իր մօր՝ Զարաթի անունով։ Խմբագրութեան մէջ 2 1/2 տարի կենդանական դեր է խաղացել հանգուցեալ Գաբ. Միլլադեանը, որը սուանձապէս վարել է «Աղբիւր, ի բ (դատարարականի համար) հրատարակուող բաժինը եւ այնուհետեւ հետագայ է գործից 1885 թ.։ Նրա հեռանալուց յետոյ, խմբագրութեան ծանրութիւնը Պ. Նա-

զարեանի տկարութեան պատճառով ընկնում է երկու ժրջան աշխատակիցների — Պ. Պ. Լեւոն Մեղիք-Աղամանի եւ Նիկ. Աւետիքեանի վերայ. «Աղբիւր, ի մէջ պատահող լատագոյն թարգմանութիւնները պատկանում են Պ. Լ. Մելիք-Աղամանին, որը մինչեւ այսօր նոյն ուղղութեամբ շարունակում է գործել նոյն գրականութեան մէջ։

Տ. Նազարեանը՝ տնտեսապէս քայքայուելով «Աղբիւր-Տարազի», մեծածախս պրիմաններից, անհամար կլիշէներից, առանձին գրքերի հրատարակութիւններից, Այսօր տպարանի կէս գումով վաճառուից եւ կորցնելով այդ գործի մէջ իր նայրական շքեղ տունը, տոհմական մեծաբժէր ոսկեղէնը, եւ գորգերը եւ շքեղ կարաւորը — իր ֆիզիքապէս խանգարուած առողջութիւնը վերականգնելու համար՝ 1892 թ. մեկնում է արտասահման եւ 1893 թ. վերադառնում է Թիֆլիս՝ «աւերակներին տիրանալու,։ Նա 1893 թ. պակաս համարները լրացնելուց յետոյ, իրաւունք է ստանում՝ քանալու 1894 թ. համար քաժանորդագրութիւն եւ վերստին շարունակում է մինչեւ այսօր «Աղբիւր-Տարազի», հրատարակութիւնը՝ տեսնելով շատ շար ու քարի, մանաւանդ Գօլիցիներեան բռնատրական դատան բեժիմին, իր գրական գործունէութեան ընթացքում։

Գ.

«Աղբիւր, ի յոբելանական տօնը — նայ մանկական գրականութեան յաղթանակի տօնախմբութիւնն է. այդ տօնը միթիւարական պէտք է լինի հատարապէս ամենքի համար. նա պէտք է ուրախացնէ մանուկ սերնդին, որդեսէր եւ գորովագութ ծնողներին, մանուկ սերնդի կրթութեան եւ դատարարականութեան նախնախնդիրներին, ազգի կալուարական յառաջագիմութեան քարեկամներին։ Մանկական գրականութեան քա-

ըեկամները իրաւունք ունին սպասել չայ նաւարակութեան ամեն խաւերից քառորդ դարու այդ տոկուն եւ եռանդուն վաստակաւորին խրախոյսի, քաջաւերութեան, յարգանքի եւ դրական ձեւի համակրութեան արտայայտութիւն: Այդ կը լինէր՝ ազգային ինքնաճանաչութեան, ազգային արժանապատուութեան եւ երախտագիտութեան զօրաւոր նշան եւ ապացոյց:

“Աղբիւր,,ի խմբագիր - իրատարակիչը քառորդ դար հրատարակելով այդ ամսագիրը՝ ամենեւին չէ համարում իր աւտքերութիւնը վերջացած չայ գրողականութեան համար. նա, որքան մեզ յայտնի է, ջերմ՝ ցանկութիւն եւ անշէջ եռանդ ունի. որ “Աղբիւր,,ը թիւակալիւն երկրորդ րասն եւ հինգամսակը, բայց, տարաբախտաբար, նրա նիւթական միջոցները սպառուած են:

“Աղբիւր,,-ին շին կարող խանգարել նաև մի տգեղ իրականութեան մէջ վերջին տարիներս երեւած իրադրական անհաւաստեղներ. դորանք ժամանակաւոր եւ վաղանցուկ սեւաթոյք ամպեր են, որոնք, վաղ թէ ուշ, կ'անցայտանան եւ կը մնան անհետ անհետեանք. լոյսը իր կարգով կը գտնէ իր ճանապարհը եւ կը¹ շարունակէ լուսաւորել աշխարհը — տիեզերական անդրդուելի օրէնքներով. բայց “Աղբիւր,,-ի իրատարակութեանը ու յարատեւութեանը կարող է սպասնալ նրա հրատարակողի նիւթական աղբիւրների սպառումը եւ այն ամեն կնճռոտութիւնները, որոնք հետեւանք են այդ րանի. որի համար եւ չայ հասարակութեան ողջամիտ եւ գիտակից հատուածները պէտք է մոռանն հւ շիողենն, որ մեր անխոնջ գրական վաստակաւորների ուրը եւ եռանդը, նրանց ազգանուէր գոր-

ծունէութիւնը վտանգի ենթարկուէր, չպէտք է թողնեն, որ նա փշրուէր մեր անգիտակցութիւնից, անտարբերութիւնից, ազգային ինքնաճանաչութեան եւ արժանապատուութեան քացակայութիւնից:

Եթէ “Աղբիւր,,ի խմբագիր իրատարակիչը իրեն ունեցած անշէջ եռանդը ու տոկուն կամքը գործ դնէր մի ուրիշ գործում, օրինակ արդիւնաբերական կամ՝ առեւտրական աւագրեզում², ինչպէս այդ արել են նրա հայրենակիցներից շատերը, որոնցից մի քանիսը այսօր մի-մի միլիոնատէր կրեոստներ են եւ շքեղ պալատների մէջ ապրողներ¹, գուցէ, եւ շատ հաւանական է, որ նա էլ այդ կրեոստներից մէկը դառնար. քայց նա ընտրել է իր համար, ինչպէս եւ շատերը մեր գրատար վաստակաւորներից, ուրիշ ճանապարհ — իր ազգին ծառայելու ու նրա վերածնութեան գործին սպասաւորելու ճանապարհը՝ ըստ իր համաստ ոյժերի եւ դրա համար էլ գոնէ է իր ոյժերը, իր նիւթական կարողութիւնը, որովհետեւ, պէտք է ենթադրել, փորբութիւնից այդ ուղղութեամբ եւ ոգով է դաստիարակուել, ինչպէս եւ շատերը մեր գրական մշակներից:

Եթէ ներկայումս չայ իրատարակութիւնը երախտագիտութեան եւ գիտակցութեան դրողմներով շարժուած գէթ նրա ծախսերի եւ նիւթական կորուստների¹ օք վերադարձնէր — “Աղբիւր-Տարագի,, իրատարակութիւնները ապահոված կարող էին համարուել:

Մենք մի ուրիշ անգամ՝ շատ երկար ենք զբաղուել գրական ֆոնդ կազմելու անշրաժեշտութեան խնդրով², որպէս զի մեր մի քանի լատպոյն իրատարակութիւնները՝ ֆոնդի զոյլութեամբ ողաւու

¹ Տե՛ս “25-ամեակ “Աղբիւր,, մանակական ամսագրի” յօդուանի առիթով հրատարակած գրքից, որի մանրամասն տեղեկութիւններից հարկաւոր համարեցին առաջ քնել վերոյիշեալ ամփոփոքը:

² Արաթեան, Արաման եւ ուրիշ շատերը:

³ Տե՛ս “Պարբերական չայ մամուլ եւ չայիւրի գիտակցութիւնը” մեր յօդուածները՝ “Ուղիւ”, 1907 թ. №№. 20, 21, 22, 25, 29, 30, 31, 33, 37, 45 եւ 48:

Մենայիւ ամին տեսակ պատահականութիւնից եւ կնճռոտութիւնից եւ ներկայումս էլ նոյն համեմունքի վրայ կնք: Մենք տածում ենք քաղցր յոյս, որ նայ հասարակութիւնը՝ իր կեանքի ներկայ խոյնրդուտը շրջանին կը գիտակցէ վերջապէս լատաղոյն պարբեր. հասարակութեան գերագանց պաշտօնականութիւնը իր կեանքի նրջանկութեան համար եւ կը իոգայ ապաւովելու նրանց գոյութիւնը, որով կ'ապաւովի եւ իր գոյութիւնը, այս խօսքի ընդարձակ մտրով:

“Աղբիւր-Ցարագի, հասարակութիւնները ապաւովելու իամար մի յատուկ անձեռնմխելի ֆունդ զլուի բերելուն քաւական էր մեր նաւթային նրեսուններից մի երկուսի ցանկութիւնը ուր մնաց թէ նայ հասարակութեան ամբողջութեան մասնակցութիւնը:

Մենք մեր կողմից յայտնելով մեր իամակրանքը եւ յարգանքը յորելեարին, որը կարողացաւ յաղթել քառորդ դար ամին տեսակ դժուարութիւններ եւ այդպիսով զարդարել իր իամիստ գործունէութիւնը անթառամ փառապաւակներով. ընդ մին տածում ենք քաղցր յոյս, որ նայ հասարակութիւնը կը հասկանայ իր պարտականութիւնը եւ դրական աշակցութեամբ ու նրախոյսներով միջոց կու տայ “Աղբիւր, ի խմբագիր-հրատարակողին եւ ապագայի համար շարունակել իր ապաստարանութիւնը՝ յօգուտ հասարակաց բարիքի, յանուն հանրային վսեմ՝ գործի:

Թիֆլիս,

ԿԵՐ. ԹԵՄՈՒՄԱՋԵՆԿ

1908 թ. Դեկտ. 21-ի:



ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ

ԳԻՐԹԵՐ ԳՅՈՒ ԳՅՈՒՅՈՒՆԵՐԻՔԵՐ ԵՒ ՀՈՅՈՒՆ
ՀԻՆ ԳՅՈՒՅՈՒՆԵՐԻՔԵՐ ԻՐԱՆԻՔԵՐ

ՀԱՅՈՒՆԵՐ ԵՐԻՐԻՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴՐՐ: ԴՈՒՆ

ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ

ԸՆԴՈՒՆԵՐ ԻՐԱՆԻՔԵՐ:

Ս.

ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ:

(ՀԱՅՈՒՆԵՐԻՔԵՐ)

III.

ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵՐ:

Հայտնական ամենահին ձեւերից մէկը, որով կատարւում էր ամուսնութիւնը, առեւանգումն էր: Առեւանգումը կայանումն է նրանում, որ մի երիտասարդ իւր ընկերների հետ յարձակում է այն ընտանիքի վրայ, որին պատկանում է հաւանած կամ սիրած աղջիկը եւ, փախցնելով վերջինի, զուգահորում է սրա հետ: Առեւանգման մէջ աղջիկը կարող էր սկզբից խօսք կա. պած լինել եւ համաձայնութիւն կայացրած այդ երիտասարդի հետ փախուստի համար, որ անտարակոյս դիւրացնում է առեւանգողների գործը եւ կամ թէ կարող էր այդ փախուստը տեղի ունենալ աղջկայ անգիտութեամբ: Առեւանգումն, ինչպէս ապացուցւում է ժողովրդների իրաւաբանական կացի պատմա-համեմատական ուսումնասիրութեամբ, գոյութիւնն է ունեցել եւ այժմ էլ գոյութիւն ունի այն հասարակութիւնների մէջ, որտեղ սոցիալ-կուլտուրական յարաբերութիւնները կանգնած են տակաւին ստորաստիճանների վրայ եւ որտեղ հասարակական տեսանկան կազմը դեռ եւս իսպառ գութը չի եկել նա հասկանալանցեղական շրջանի պայմաններից:

Հայոց մէջ էլ գոյութիւն էր ունեցել առեւանգումն այդքն շատ հին պատմական ժամանակներում, ինչպէս եղբակացնում ենք եղած փաստերից: Այդ առեւանգման հետեւանքներն ու մնացորդները դեռ պահպանուել են նոյն իսկ մեր օրերում հասարակաց ձեւերի մէջ, որտեղ սիմբոլիական ձեւերով արտայայտւում է դա: Այնքան է, որ Հայոց պատմութեան միջին դարերումն եւս ծաղկած գրութեան մէջ կը լինէր ամուսնութեան այդ տեսակ եղանակը: Դա հաս-